

# ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ԶՆՆԱՐԿՈՒՄ

## ԳԻՏԱԿԱՆ ՈՃՐ ԵՎ ՆՐԱ ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Ա. Ա. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Գրական լեզվի գործառական տարբերակներից մեկը գիտական ոճն է, որ կիրառվում է գիտահետազոտական աշխատանքի բնագավառում՝ գիտության տարբեր ճյուղերում, տեխնիկայում, դասախոսությունների ժամանակ:

Իր լեզվական հատկանիշներով այն առանձնահատուկ տեղ է գրավում գործառական ոճերի համակարգում: Պատահական չէ այն հետաքրքրությունը, որ ցուցաբերում են լեզվաբան ոճագետները գործառական այս ոճի նկատմամբ:

Այդ հետաքրքրությունն առավել մեծացավ 70-ական թթ., և գիտական ոճի ուսումնասիրությունը դարձավ լեզվաբանության հրատապ խնդիրներից մեկը: Գիշտ է նկատված, որ ներկա ժամանակում հագիվ թե գտնվի գրական լեզվի ոճական շերտավորմանը նվիրված որևէ աշխատանք, որի մեջ այս կամ այն չափով անդրադարձած չլինեն գիտական ոճին<sup>1</sup>: Այս երևույթն ունի նաև մի այլ հիմնավոր պատճառ. ցանկացած գրական լեզվի գործառական շերտավորման առանցքային խնդիրը գեղարվեստական ու գիտական ոճերի տարբերակումն է: Լեզվական միջոցների գործածության յուրահատկությունը, լեզվական հատկանիշների որոշակիությունը գիտական ոճը դարձնում են լեզվաբանական ուսումնասիրության հետաքրքրական բնագավառներից մեկը:

Հիրավի, գիտությունը կարևոր և առաջնակարգ դեր ունի հասարակության կյանքում:

Գիտական ոճը, նրա լեզվական յուրահատկությունների, գործառական օրինաչափությունների բացահայտումը, անշուշտ, լեզվաբանական գիտության համար ունի և՛ տեսական, և՛ գործնական կարևոր նշանակություն:

Գործառական այս տարբերակը բավական հանգամանորեն քննված է ռուսական ոճաբանության մեջ: Սկսած 70-ական թվականներից՝ լույս են տեսել ոչ միայն ոճաբանության դասագրքեր, այլև բազմաթիվ ուսումնասիրություններ՝ նվիրված մասնավորապես գիտական շարադրանքի լեզվական յուրահատկությունների, գիտական ոճի ընդհանուր օրինաչափությունների բացահայտմանը<sup>2</sup>:

Հայերենի ոճաբանության մեջ ինչպես լեզվի գործառական ոճերի, այնպես էլ գիտական ոճի մասին տակավին առանձին ուսումնասիրություններ չկան, թեպետ, իհարկե, վերջին տասնամյակներին լույս տեսած ոճաբանական դասագրքերում ու ձեռնարկներում, ինչպես նաև առանձին հոդվածներում անդրադարձներ կան այդ հարցի վերաբերյալ<sup>3</sup>: Այս հարցին առանձին հոդված է նվիրել Ս. Աբրահամյանը<sup>4</sup>:

Արդի շրջանում, երբ առավել լայն են գրական լեզվի գործածության շրջանակները, անհրաժեշտություն է դարձել նրա գործառական ոլորտներով պայմանավորված լեզվական տարբերակների ուսումնասիրությունը:

Գրական լեզու ասելով, իհարկե, չպետք է հասկանալ միայն գեղարվեստական գրականության լեզուն, չնայած որ նրա դերը շատ մեծ է գրական լեզվի զարգացման ու կատարելագործ-

<sup>1</sup> Տե՛ս Н. М. Разинкина, Развитие английской научной литературы, М., 1978, էջ 10:

<sup>2</sup> Տե՛ս Д. Э. Розенталь, Практическая стилистика русского языка: М., 1974, "Язык и стиль научной литературы", М., 1977, "Особенности стиля научного изложения", М., 1976:

<sup>3</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, Ֆ. Խլղաթյան, Հայոց լեզու, Երևան, 1994, Ս. Մելքոնյան, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Երևան, 1984, էջ 234, Ս. Աբրահամյան, Հայոց լեզու, բառ-և խոսք, Երևան, 1978, էջ 42, Ա. Մարություն, Լեզվի գործառական ոճերը, ՀԼԳԴ, 1975, N 3:

<sup>4</sup> Տե՛ս «Լրաբեր» ԳԱ, 1982, N 3:

ման մեջ: Միանգամայն ճիշտ է նկատում էր Աղայանը, որ ոչ մի ժամանակակից գրական լեզու միայն գեղարվեստական գրականության լեզու չէ և երբեք էլ այդպիսին չի եղել<sup>5</sup>: Բայց և այնուհետք է ասել, որ ինչպես լեզվի գործառնական ոճերի, այնպես էլ գիտական ոճի ձևավորումն ու զարգացումը կապվում է գրական լեզվի զարգացման հետագա շրջանի հետ:

Գիտության ու տեխնիկայի զարգացումը, գիտության տարբեր ճյուղերի առաջացումն ու մասնատումը, հասարակության կյանքում ունեցած անաջատար դերը, բնականաբար, առաջ են բերում գիտական համապատասխան հասկացությունները լեզվական յուրահատուկ միջոցներով արտահայտելու պահանջ ու անհրաժեշտություն: Տարբեր գիտաճյուղերի զարգացման հիմքի վրա էլ ձևավորվում է գիտական ոճը՝ որպես գրական լեզվի առանձնահատուկ տարբերակ:

Նկատենք, որ ինչպես լեզվի գործառնական մյուս տարբերակներում, այնպես էլ գիտական ոճի ձևավորման մեջ կարևորվում է, անշուշտ, արտալեզվական գործոնների դերը: Գիտական ոճի լեզվական հատկանիշների ձևավորումը տեղի է ունենում արտալեզվական գործոնների ազդեցությամբ: Գիտական շարադրանքի համար այդպիսի հատկանիշ են **տրամաբանականությունն ու բացատրականությունը**<sup>6</sup>:

Գիտական ոճի համար բնորոշը խոսքի մենախոսական ձևն է, որ հիմնականում ունենում է գրավոր արտահայտություն: Բայց այն կարող է դրևորվել նաև բանավոր ձևով, հատկապես գիտական բանավեճերի, զրույցների ու դասախոսությունների ժամանակ: Ավելացնենք, որ բոլոր դեպքերում էլ գիտական հաղորդակցումը որոշ սահմանափակություն ունի: Դա բացատրվում է ոչ միայն այդ գիտաճյուղին բնորոշ հասկացություններով ու տերմինաբանությամբ, որ հասկանալի է լինում հիմնականում միայն մասնագետներին, այլև նրանով, որ գիտական հաղորդակցումը տեղի է ունենում համապատասխան գիտաճյուղով զբաղվողների շրջանում:

Խոսքը մարդու մտածական գործունեության արտահայտությունն է: Բայց մտածողության երկու եղանակ գոյություն ունի՝ ա) տրամաբանական, առարկայական, բ) պատկերավոր, ոչ սովորական: Մտածողության այս երկու եղանակների տարբերությունը նկատել է դեռ Վ. Գ. Բեյլինսկին՝ նշելով, որ արվեստի և գիտության տարբերությունն ամենևին էլ բովանդակության մեջ չէ, այլ տրված բովանդակությունը մշակելու եղանակի մեջ: Փիլիսոփան խոսում է տրամաբանական փաստարկներով, գորող՝ պատկերներով և կերպարներով, բայց երկուսն էլ նույն բանն են ասում, միայն թե մեկն **ասպացուցում է**, մյուսը ճշմարիտ պատկերներով **ցույց է տալիս**<sup>7</sup>: գործելով իր ընթերցողների երևակայության վրա<sup>7</sup>:

Հասկանալի է, որ անչափ մեծ է տրամաբանական մտածողության դերը իմացության գործընթացում: Այս դեպքում մարդը դատողություններ է անում առարկաների, երևույթների, նրանց հատկանիշների մասին՝ առանց սուբյեկտիվ, կամային կամ զգացական վերաբերմունքի: Առօրյա խոսակցության ժամանակ, գործնական-պաշտոնական գրագրություններում օգտվում ենք մտածողության սովորական եղանակից: Գիտական խոսքը նույնպես առարկայական մտածողության հետևանք է, բայց դրանք չի կարելի նույնացնել: Գիտականի մտքի լեզվական ձևավորումը պահանջում է բարձր կազմակերպվածություն ու տրամաբանվածություն: Ամեն մի գիտական խոսք հիմնվում է տրամաբանական մտածողության, հասկացությունների, դատողությունների ու մտահանգումների վրա:

Գիտական ոճի լեզվական յուրահատկությունները, անշուշտ, պայմանավորված են **գիտական մտածողության եղանակով, նրա հաղորդակցական խնդիրներով ու նպատակներով**:

Արդ տեսնենք, թե ինչ է գիտական ոճը և լեզվական ինչ հատկանիշներ ունի: Մասնագիտական գրականության մեջ գիտական ոճի ըմբռնման հարցում տարբեր մոտեցումներ, տարբեր կարծիքներ կան: Առանձին ուսումնասիրողներ (Մ. Պ. Կոլզավ, Մ. Պ. Մենկևիչ) գիտական ոճի շրջանակներում առանձնացնում են երկու ենթաոճեր՝ գիտատեխնիկական և գիտահումանիտար, իսկ ոմանք էլ (Գ. Ա. Վելյաման, Վ. Մ. Ավրասիև) ավելի են մասնատում գիտական ոճը ընդունելով ֆիզիկայի, քիմիայի, բժշկական ենթաոճեր<sup>8</sup>: Վ. Պ. Մուրատը, Ա. Ի. Եֆիմովը ինքնուրույն ոճեր են համարում գիտական և պրոֆեսիոնալ-տեխնիկական ենթաոճեր<sup>9</sup>:

<sup>5</sup> Տե՛ս **էր. Աղայան**, Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987, էջ 101:

<sup>6</sup> Տե՛ս **Н. М. Разинкина**, նշվ. աշխ., էջ 14:

<sup>7</sup> Տե՛ս **Վ. Գ. Բեյլինսկի**, Փիլիսոփայական ընտիր երկեր, հ. 2, Երևան, 1956, էջ 467:

<sup>8</sup> Տե՛ս “Особенности стиля научного изложения”, М., 1976, էջ 74-82:

<sup>9</sup> Տե՛ս **В. П. Мурат**, Об основных проблемах стилистики, М., 1957, էջ 21-22, **А. И. Ефимов**, Стилистика русского языка, М., 1969, էջ 16-17:

Անկասկած է, որ գիտության յուրաքանչյուր բնագավառ ունի այդ գիտաճյուղի բնույթով պայմանավորված լեզվական առանձնահատկություններ, հատկապես եզրույթներ (տերմիններ): Սակայն դա մեզ հիմք չի տալիս գիտական ոճը մասնատել և այդ ենթաոճերը դիտել որպես լեզվի գործառական առանձին տարբերակներ: Միանգամայն իրավացի է Ռ. Բուդաղովը, երբ գրում է, որ մասնագիտական տերմինների առկայությունը քիմիայի կամ բուսաբանության գիտական աշխատություններում դեռ չի նշանակում, թե գոյություն ունեն հատուկ «քիմիական» կամ «բուսաբանական» լեզվական ոճեր, այլ որ ամեն մի գիտություն ունի իր գիտաճյուղի յուրահատկություններով պայմանավորված հասկացություններ: Այդ պատճառով էլ չպետք է առանձնացվեն հատուկ բժշկական կամ քիմիական-գիտական ոճեր, այլ ընդունվի միասնական գիտական ոճ<sup>10</sup>:

Գիտական ոճը միասնական ամբողջություն են դիտում նաև Դ. Է. Ռոզենտալը, Ե. Ս. Տրոյանսկայան՝ նշելով, որ վերջին ժամանակներում նկատվող գիտական խոսքի ոճը «ենթաոճերի» մասնատելու միտումները հազիվ թե արդարացնում են իրենց<sup>11</sup>:

Մեզ նույնպես հիմնավոր չի թվում գիտական ոճը առանձին ենթաոճերի մասնատելու տեսակետը: Իրավացի են այն ոճագետները, որոնք ընդունում են միասնական գիտական ոճի գոյությունը: Ճիշտը և ընդունելին այն է, ըստ որի գիտական ոճը, անկախ իր մասնագիտական տարբեր դրսևորումներից, դիտվում է որպես **ընդհանուր ու միասնական գործառական տարբերակ**:

Եզրակացությունը պարզ է, գիտական ոճը որպես այդպիսին բնութագրելիս պետք է ելնել ոչ թե առանձին գիտաճյուղերի (բնական, ճշգրիտ, հումանիտար) առանձնահատկություններից, այլ գիտական շարադրանքին ներկայացվող ընդհանուր սկզբունքներից ու պահանջներից, որ հատուկ ու բնորոշ է լեզվական այդ տարբերակին:

Եվ եթե նկատի ունենանք գիտական շարադրանքի և լեզվական միջոցների ընտրության ընդհանուր սկզբունքներն ու նրան ներկայացվող պահանջները, ապա անկասկած է, որ գիտական ոճը, անկախ տարբեր գիտաճյուղերի յուրահատկություններից, ընդհանուր ու միասնական է: Այնպես որ գրական լեզվի ընդհանուր համակարգում, որպես գործառական տարբերակ, պետք է ընդունել **գիտական ոճ** անվանումը: Բայց դա ամենևին էլ չի նշանակում անտեսել տարբեր գիտաճյուղերի միջև եղած լեզվական յուրահատկություններն ու տարբերությունները: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է գիտական շարադրանքի ընդհանուր սկզբունքներին ու պահանջներին: Հետևաբար, գիտական միասնական ոճի գոյությունը չի ժխտում կամ բացառում լեզվաժողովրդական տարբերությունները գիտության տարբեր ճյուղերի միջև: Անշուշտ, այս կամ այն գիտաճյուղի բնույթով ու առանձնահատկություններով պայմանավորված կարող են լինել (և կան) որոշակի տարբերություններ (մասնավոր եզրույթների): Օրինակ՝ տեխնիկական գիտություններում նկարագրականությունն ավելի շատ է, քան ճշգրիտ գիտություններում, ասենք՝ մաթեմատիկայում: Առավել շատ տարբերություններ կան նշված գիտաճյուղերի և հումանիտար գիտությունների միջև: Դա շատ պարզ ու տեսանելի է տարբեր գիտաճյուղերի թռուցիկ համեմատությունից. «Բայց գալիքի համար Դուրյանը մնաց որպես **բանաստեղծական մեծություն**: Հանճարեղ պատանին ստեղծեց մի քանի հրդեհված, այրող երգեր, մի քանի զլուխգործոց, հոգեկան դրամայի ցնցող էջեր, որոնք իսկույն բռնեցին մթնոլորտը: Եվ հավերժորեն... **Գլխավոր գլուխն այն էր, որ հանճարի բանաստեղծական տեսողության տակ է ընկնում կենդանի մարդը՝ անձնական ապրումների խորքով, քաղությամբ: Դա մեծ նորություն էր հայ բանաստեղծության մեջ, քանի որ կամա թե ակամա Դուրյանը հարթահարում էր հրապարակախոսությունը և քաղաքական պաթոսը՝ տեղը դնելով իրապատում հոգեբանությունը**»<sup>12</sup>:

Այս մեջբերումից էլ երևում է, որ գրականագիտությունը, որպես խոսքի արվեստի գիտություն, ավելի ազատ է լեզվական միջոցների ընտրության մեջ: Հենց բերված հատվածում հանդիպում ենք խոսքի պատկերավոր արտահայտությունների՝ մակդիրների, փոխաբերությունների, որոնք սովորաբար բացառվում են գիտական խոսքում: Վերջենք մեկ այլ օրինակ. «Կլիմայական պայմանները երկրի վրա շատ բազմազան են: Կան շրջաններ, որտեղ ջերմաստիճանը երբեք ցելսիուսի գոտ աստիճանից չի բարձրանում, այսինքն՝ գտնվում է ջրի սառչելու կետում:

<sup>10</sup> Steu P. A. Будагов, Введение в науку о языке, М., 1958, էջ 141:

<sup>11</sup> Steu Д. Розенталя, նշվ. աշխ., Ե. Троянская, Язык научной литературы, 1975, էջ 40:

<sup>12</sup> Հր. Թամրազյան, Հայ քնարերգուներ, Երևան, 1996, էջ 32:

Այդ է պատճառով, օրինակ, որ Արևելահայերը և Անտարկտիդայում, ինչպես նաև բարձր լեռներում Երկրի մակերեսը մշտապես ծածկված է կարծր փուլում գտնվող ջրով՝ սառույցով և ձյունով»<sup>13</sup>:

Մեջբերված երկու օրինակների համեմատությունը պարզ ցույց է տալիս, որ կան տարբերություններ առանձին գիտաճյուղերի միջև, բայց երկուսն էլ գրված են գիտական ոճով:

Լեզվի գործառական տարբերակները, իհարկե, միմյանցից չիմական պարսպով բաժանված չեն, առավել ևս գիտական շարադրանքի ենթաճեղքը: Այնպես որ չի բացառվում, որ գիտական խոսքում էլ կարող են հանդիպել համեմատություններ, նույնիսկ փոխաբերություններ, բայց դա չի նշանակում, թե դրանք գիտական խոսքի հատկանիշ են: Ամեն դեպքում պետք է նկատի ունենալ, թե դրանք ինչ գործառույթ ունեն լեզվի տվյալ տարբերակում:

Այսպիսով, գիտական շարադրանքի լեզվական առանձնահատկությունները պայմանավորված են ոչ միայն այդ ոճին ներկայացվող և ընդհանուր սկզբունքներից բխող պահանջներով, այլև գիտական խոսքի բովանդակությամբ, տվյալ գիտաճյուղի բնույթով ու նպատակներով:

Գիտական խոսքի հիմնական նպատակն այն է, որ ընթերցողին կամ ունկնդրին ճիշտ պատկերացում տա շրջապատող աշխարհի առարկաների ու երևույթների, նրանց հատկանիշների ու ներքին փոխադարձ կապերի մասին: Գիտական շարադրանքը պետք է ճշտորեն արտացոլի մտածողության օբյեկտիվությունը:

Գործառական այս տարբերակի ամենաբնորոշ կողմն այն է, որ գիտական շարադրանքը դատողական խոսք է, քանի որ արտացոլում է մարդու մտադատողական գործունեությունը: Ինչպես նկատում է Շ. Բալլին, մարդկային միտքը լեզվական անհրաժեշտ միջոցներով ձգտում է տալ իրականության մեջ ռեալ գոյություն ունեցող երևույթների նկարագրությունը կամ արտացոլել օբյեկտիվ ճշմարտությունը<sup>14</sup>:

Ամեն մի իսկական գիտական ստեղծագործություն ամենից առաջ մարդու մտածողական-դատողական գործունեության արդյունք է, և բնական է, որ գիտական ոճի լեզվական հատկանիշները պայմանավորված են մտքի դրսևորման այդ եղանակի յուրահատկություններով: «Գիտության լեզուն,- գրում է Բալլին,- ունի նույն հատկանիշները, ինչ որ գիտական ուսումնասիրությունը **անդիմություն, օբյեկտիվություն, դատողականություն**»<sup>15</sup> (ընդգծումը մերն է- Ա. Մ.):

Գիտական ոճը, որպես գրական լեզվի շրջանակներում գործառնվող տարբերակ, առանձնանում է հենց նրանով, որ ծառայում է մտքի տրամաբանված, ճշգրիտ ու միանշանակ արտահայտմանը: Մտածողության հիմնական ձևը գիտության ոլորտում դատողություններն ու մտահանգումներն են, որոնք տրամաբանական հետևողականությամբ հաջորդում են միմյանց ստեղծելով ներքին կապակցություն պարբերությունների միջև: Եվ իրոք, գիտական ոճի համար բնորոշ, հիմնականը խիստ հետևողական տրամաբանական շարադրանքն է: Այս դեպքում հիմնական ուշադրությունը դարձվում է արտահայտած մտքի ճշտության և հիմնավորվածության վրա: Գիտական շարադրանքի էական հատկանիշը դրսևորվում է նույնիսկ յուրաքանչյուր պարբերության մեջ: Գիտական խոսքում միտքը պետք է փաստարկված լինի:

Գիտական շարադրանքում գրեթե չեն գործածվում պատկերավորման միջոցներ, հուզաարտահայտչական տարրեր: Դա բացատրվում է նրանով, որ գիտական ոճն աչքի է ընկնում շարադրանքի օբյեկտիվությամբ, այսինքն՝ գիտնականը նյութը շարադրելիս իր անձնական վերաբերմունքը չի արտահայտում, այլ գործածելով տվյալ բնագավառի համար բնորոշ լեզվական միջոցներ՝ ձգտում է բացահայտել օբյեկտիվ ճշմարտությունը՝ փաստերի ցուցադրման և ապացուցման մեթոդով: Ինչպես բառապաշարի ընտրության, այնպես էլ խոսքի կառուցման հիմնական սկզբունքը դառնում է ճշգրտության և կոնկրետության չափանիշը:

Հետևաբար, գիտական ոճի հիմնական, բնորոշ կողմը դրույթների, հասկացությունների, ճշմարտության ապացուցումն է դատողությունների միջոցով: Մտքի արտահայտման հիմնական միջոցը ոչ թե պատկերն է, որ բնորոշ է գեղարվեստական խոսքին, այլ դատողությունը, տրամաբանական ապացուցման ձևերը:

Գիտական ոճի բնորոշ հատկանիշ պետք է համարել նաև արտահայտման **միանշանակ-**

<sup>13</sup> Տե՛ս Վ. Շևչենկոյի հոդվածը Լ. Բալագանի «Գիտնականի ոճի ուսուցումը» գրքում, Երևան, 1990, էջ 42:

<sup>14</sup> Տե՛ս Մ. Բալլի, Французская стилистика, 1961, էջ 143-144:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 191:

**կությունը, բացատրականությունը, հուզականության բացակայությունը:** Բացի շարադրանքի ընդգծված տրամաբանվածությունից գիտական ոճին հատուկ են նաև այլ հատկանիշներ, որոնք դարձյալ բխում են գիտական շարադրանքին ներկայացվող պահանջներից:

Անկասկած է, որ մտածողությանը, առավել ևս գիտական, հատուկ է **վերացարկումն** ու **ընդհանրացումը:** Համարյա յուրաքանչյուր բառ, ինչպես նկատում է Մ. Մ. Կոժինան, գիտական խոսքում հանդես է գալիս որպես ընդհանուր հասկացության արտահայտիչ<sup>16</sup>:

Իհարկե, վերացարկումը հատուկ է ոչ միայն գիտական ոճին, այլև ընդհանրապես լեզվին, բայց այստեղ այդ առանձնահատկությունը նշվում է որպես գիտական ոճի տարբերակիչ հատկանիշ, քանի որ այն իր էությանը տարբերվում է համապատասխան մակարդակների վերացարկումից: Այսպես, հայտնի է, որ բառային մակարդակի միավորը՝ բառը, նույնպես ընդհանրացում է պարունակում: Օրինակ՝ **ծառ** ասելով հասկանում ենք աշխարհում գոյություն ունեցող բոլոր ծառերը: Բայց այն ընդհանրացում պարունակելով հանդերձ՝ խոսքի մեջ գործածվելիս ստանում է առարկայական վերաբերություն՝ նշանակելով կոնկրետ առարկա (Մեր բակի **ծառը** կտրեցին): Մակայն գիտական շարադրանքում այդպես չէ, այսինքն՝ տվյալ բառը, որ հիմնականում գործածվում է տերմինային արժեքով, խոսքում գործածվելիս էլ կոնկրետ առարկա ցույց չի տալիս, այլ մնում է որպես ընդհանուր հասկացության արտահայտիչ, անգամ եթե գործածվում է որոշյալ առումով: Օրինակ՝ «**Չարը, երկաթը, ծծումբը, կրաքարը, թթվածինը** քիմիայում անվանում են նյութ» (Մ. Գլինկա, Ընդհանուր քիմիա, էջ 7): «**Արմատները** բույսն ամրացնում են հողում...» (Բուս. դաս.): «**Մարդը** մշակության մեջ գտնվող բույսերն օգտագործում է որպես սնունդ...» (բուսաբանություն): Բերված օրինակներում ընդգծված բառերը գործածված են ընդհանուր իմաստով, իսկ առաջին օրինակում բայ-ստորոգյալն էլ ունի ընդհանուր իմաստի նշանակություն: Գիտական ոճի այս հատկությունը, անշուշտ, ամենից առաջ դրսևորվում է բանապաշարում ու տերմինաբանության մեջ:

Գիտական ոճում լայն չափով գործածվում են գիտության տվյալ բնագավառին վերաբերող տերմիններ (եզրույթներ) ու տերմինային կապակցություններ, որոնք հնարավորություն են տալիս ճշգրիտ կերպով արտահայտելու գիտության տվյալ ճյուղին վերաբերող համապատասխան հասկացություններ: Կարելի է ասել, որ գիտության տարբեր ճյուղերի լեզվական տարբերություններն ամենից անաչ արտահայտվում են բանապաշարի մեջ: Առանձին գիտաճյուղեր իրենց բովանդակության տարբերություններով հանդերձ՝ միմյանցից տարբերվում են տերմիններով ու տերմինային կապակցություններով: Նույնիսկ դրանց թվարկումը կարող է մեզ ասել, թե դրանք գիտության որ բնագավառում են գործածվում: Այսպես՝ **ատոմ, վեկտոր, արագացում, ազատ անկյուն** (ֆիզիկա), **օքսիդներ, հիմքեր, թթուներ, ռեակցիա** (քիմիա), **անկանոն կոտորակ, քառակուսի հավասարում, ֆունկցիաների գրաֆիկ** (մաթ.), **հնչույթ, ձևույթ, հոլովում, խոնարհում** (լեզվաբան.) և այլն:

Մակայն պետք է նկատի ունենալ, որ գիտական խոսքում ոչ միայն լայնորեն գործածվում են տվյալ բնագավառին վերաբերող տերմիններ, այլև համագործածական բառերը նույնպես կարող են տերմինային արժեք ստանալ և գործածվել որպես տերմին: Հասկանալի է, որ այս դեպքում բառը դառնում է մենիմաստ: Եթե բազմիմաստությունը գեղարվեստական խոսքի համար դրական երևույթ է, լեզվի հարստության նշան, ապա գիտական ոճում այն կարող է իհրավել որպես թերություն: Գիտական տերմինը պետք է միանշանակ լինի, հստակ ու որոշակի: Օրինակ՝ **թթու** բառի առօրյա գործածությունն ամենքիս հայտնի է, բայց քիմիայում այն արդեն տերմինային արժեք ունի (թթուներ և հիմքեր): Կամ՝ **Միքսս** ցավում է անցած-զնացած օրերիս համար: /Մեկը իմ **սիրտը** փշրելով անցավ (ՎՏ): Ընդգծված բառը համեմատենք այդ նույն բառի տերմինային կիրառության հետ. **Միքսս** հատուկ է միայն զարգացած արյունատար համակարգ ունեցող կենդանիներին (ՀՀ): Նրանց իմաստային տարբերությունն ակնհայտ է:

Անշուշտ, հաղորդակցման կոնկրետ պահանջներով ու գիտության տարբեր ճյուղերի խընդիրներով պայմանավորված՝ գիտական ոճն ստանում է լեզվական յուրահատուկ ձևավորվածություն, որը կարիք ունի հատուկ քննության: Այստեղ նշենք լեզվական մի քանի հատկանիշներ էլ, որ բնորոշ են գիտական ոճին ընդհանրապես:

Նկատենք մի կարևոր հանգամանք, որ գիտական ոճի շարադրանքում խոսքի մասերից

<sup>16</sup> Տե՛ս Մ. Н. Кожина, *Стилистика русского языка*, М., 1977, էջ 160:

ավելի շատ գործածվում են գոյականներ, ածականներ (հիմնականում հարաբերական), քան բայեր: Մեր միտքը հաստատելու համար բերենք երկու օրինակ տարբեր գիտաճյուղերից. «**Լեզվի** հետ առնչվող շատ **խնդիրներ գիտության զարգացման** ներկա **փուլում բանավեճի նյութ** են: **Գոյություն** ունի **տեսակետ**, որի համաձայն **լեզուն նշանների (սիմվոլների) համակարգ** է: Մակայն այս **տեսակետն** ընդունելու դեպքում պետք է տարբերել բնական, կենդանի խոսակցական **լեզվի նշանները (սիմվոլները)** արհեստական **լեզվի սիմվոլներից**: Այդ **տարբերությունը**, որ խիստ կարևոր է, հանգում է հետևյալին. բնական **լեզուն** որպես **նշանների (սիմվոլների) համակարգ** բնապատմական **պրոցեսի արդյունք** է, մինչդեռ արհեստական **լեզուների համակցությունը մարդկանց միջև պայմանավորվածության արդյունք** է»<sup>17</sup>:

Բերված հատվածում գործածված բառերի մոտ կեսը (67 բառից 31-ը) գոյական է: Մեկ այլ օրինակ. «Մեր **չրջապատում** ընթացող բոլոր **երևույթները մատերիայի շարժման** տարբեր **դրսևորումներ** են: Առաջին **հայացքից** քառասյին թվացող այդ **երևույթների միջև գոյություն** ունեն **ներքին պատճառական կապեր** ու խիստ որոշակի **օրինաչափություններ**: Այդ **օրինաչափությունների կապերի բացահայտման** է կոչված բնական և հասարակական **գիտությունների** ամբողջական **համակարգը**: **Ֆիզիկան** հիմնարար **գիտություն** է, որն ուսումնասիրում է **մատերիայի շարժման** առավել ընդհանուր **հատկությունները**, **մատերիայի շարժման** առավել պարզ և ընդհանուր **օրինաչափությունները**»<sup>18</sup>:

Գրեթե նույն հարաբերությունը տեսնում ենք այստեղ. հատվածում գործածված 58 բառից 22-ը գոյական է, ինճը՝ ածական, և միայն չորսը՝ բայ:

Բայց այս հատվածում տեսնում ենք նաև գիտական ոճի մեկ այլ հատկանիշ՝ գոյականների կրկնությունը նույն բնագրում: Դիշտ է նկատել Ս. Աբրահամյանը, որ «կրկնության անհրաժեշտությունը բխում է խոսքի ճշգրիտ, միանշանակ ու ոլորին ընկալման պահանջից»<sup>19</sup>:

Ավելի մեծ հատվածների վիճակագրական քննությունը դարձյալ հաստատում է այս ենթադրության ճշտությունը: Այսպես, Ն. Լ. Գլինկայի «Ընդհանուր քիմիա» բուհական դասագրքի (1979) 44-րդ էջում գործածված է 84 գոյական, 16 ածական և 23 բայ: Գիտական ոճում գոյականների բացարձակ գերակշռությունը բացատրվում է նրանով, որ գիտության բնագավառում մենք գործ ունենք հիմնականում հասկացությունների հետ, իսկ հասկացությունները դրսևորվում են իմաստակիր միավորների՝ բառերի, հիմնականում գոյականների և ածականների միջոցով: Առարկաները, երևույթները, նրանց հատկանիշներն արտահայտող բառերը գոյականն ու ածականն են:

Գիտական ոճի լեզվական առանձնահատկությունները դրսևորվում են նաև բայական իրողությունների գործածության մեջ: Գիտական ոճում գործածված բայական ձևերի գործածությունը հետաքրքրական օրինաչափություններ է պարզում. դիմավոր ձևերի մեջ ամենաշատ գործածականը **սահմանական եղանակն** է: Ըստ որում սահմանական եղանակի ժամանակաձևերի գործածության բազմազանություն չի նկատվում:

Մեր միտքը հաստատելու և գիտական ոճում գործածված բայաձևերի պատկերը ներկայացնելու նպատակով գիտական տարբեր աշխատություններից բերենք վիճակագրական մի քանի տվյալներ, որոնք, անշուշտ, կարող են հիմք տալ որոշ ընդհանրացումների: Այսպես, Գ. Բրուտյանի արդեն նշված «Ձևական տրամաբանության դասընթացի» գրքի վեց էջում գործածված 93 բայ-ստորոգյալներից 80-ը սահմանական եղանակի բայաձևեր են, 9-ը՝ ըղձական, 2-ը՝ ենթադրական և 2-ը՝ հարկադրական: Այստեղ կարևոր է նշել մի էական հանգամանք. բերված 80 դիմավոր ձևերից 63-ը՝ ներկա ժամանակի բայաձևեր են, երկուսը՝ անկատար անցյալ տասը՝ վանկատար, երեքը՝ հարկատար անցյալ և միայն մեկը՝ անցյալ կատարյալ:

Գրեթե նույն օրինաչափությունը նկատում ենք ճշգրիտ գիտություններում: Այսպես, Ա. Բերմանտի և Ի. Արամանովիչի «Մաթեմատիկական անալիզի համառոտ դասընթացի» քսան էջի սահմաններում կատարած վիճակագրական քննությունը հաստատում է այդ մտքի ճշտությունը: Գործածված 152 դիմավոր բայերից 125-ը սահմանական եղանակի բայաձևեր են՝ դարձյալ **ներկա ժամանակի** բայաձևերի բացարձակ գերակշռությամբ (112 բայաձև): Գլինկայի արդեն նշված դասագրքի տասը էջում գործածված 140 դիմավոր բայաձևերից 60-ը ներկա ժա-

<sup>17</sup> Գ. Բրուտյան, Ձևական տրամաբանության դասընթաց, Երևան, 1967, էջ 24:

<sup>18</sup> Մ. Գ. Աբրահամյան, Մեխանիկայի ֆիզիկական հիմունքները, Երևան, 1997, էջ 8:

<sup>19</sup> Տե՛ս «Լրաբեր» ԳԱ, 1982, N 3, էջ 22:

մանակի բայածևեր են, իննը՝ անկատար անցյալ, 22-ը՝ վաղակատար անցյալ, 17-ը՝ հարակատար և 7-ը՝ անցյալ կատարյալ (ընդամենը՝ 126): Մնացածը ըղձական (2), ենթաղղական (5) և հարկադրական եղանակի բայածևեր են (7):

Ելևելով գիտական ոճի բնության վիճակագրական այս տվյալներից՝ որոշակիորեն կարող ենք ասել, որ **գիտական շարադրանքում դիմալոր բայածևերի մեջ իշխողը սահմանական եղանակի բայածևերն են՝ ներկա ժամանակի բացարձակ գերակշռությամբ**: Այս երևույթի մասին հետաքրքրական դիտողություն ունի Ի. Ա. Վոլինան: Նա նշում է, որ հատկապես ճշգրիտ գիտություններում ներկա (present) ժամանակի գերակշռությունը բացատրվում է նրանով, որ մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի ուսումնասիրության պրոբլեմները կապվում են ներկայի հետ և ոչ թե հրատապությունը կորցրած պատմական փաստեր են: Այդ գիտաճյուղին բնորոշ ընդհանրակառուցումը տարժամանակյա բնույթ է կրում<sup>20</sup>:

Այս մտքին ավելացնենք այն, որ ներկա ժամանակի բայածևերով արտահայտվում են ընդհանուր ճշմարտություններ: Պատահական չէ, որ գիտական ոճի շարադրանքում բայի ներկա ժամանակի ձևերը հիմնականում ունեն ընդհանրական իմաստ, այսինքն՝ այդ բայածևերի դիմային իմաստը չի կոնկրետանում. տվյալ դեմքով արտահայտված բայածևը չի արտահայտում միայն այդ դեմքի իմաստը, այլ ունենում է ընդհանուր դիմային նշանակություն: Օրինակ «Մաթեմատիկայում **հետաքրքրվում են**, թե ինչպես է կախված ֆունկցիան արգումենտից և **չեն հետաքրքրվում** այն բանով, թե ինչ կոնկրետ ֆիզիկական երևույթ է նկարագրվում տվյալ ֆունկցիոնալ կախումով» (Մաթանալիզի համառոտ դասընթաց, էջ 23):

«Ցենենալյին խառնուրդի թրծման ժամանակ կալցիումի կարբոնատը **քայքայվում է**՝ տալով ածխածնի դիօքսիդ» (Ընդհանուր քիմիա, էջ 18):

Բայական իրողություններում նկատելի է նաև մի այլ երևույթ. գիտական ոճի շարադրանքում գրեթե բացառվում է հրամայական եղանակի բայածևերի գործածությունը, իսկ մյուս եղանակները հանդիպում են հազվադեպ: Դա, իհարկե, պատահական չէ, քանի որ գիտական ոճի հիմքում դատողական խոսքն է, որն արտահայտվում է պատմողական նախադասություններով, իսկ այդ կարգի նախադասությունների ստորոգյալն արտահայտվում է սահմանական եղանակի բայածևերով:

Գիտական ոճի մենախոսական բնույթից բխում է լեզվական մեկ այլ յուրահատկություն. այս ոճում գրեթե երկրորդ դեմքի բայածևեր չեն գործածվում:

Շարահյուսական իրողություններում նկատվում է բարդ նախադասությունների գործածության միտում: Եվ դա բնական է. բարդ մտքեր արտահայտելու համար պահանջվում է տարբեր տիպի բարդ կառույցների գործածություն:

Այսպես, օրինակ, բուհերի համար նախատեսված «Բուսաբանություն» դասագրքում մեր հաշված հարյուր նախադասությունից 60-ը բարդ նախադասություններ են՝ համադասական և ատորադասական նախադասությունների բացարձակ գերակշռությամբ, իսկ 40-ը՝ պարզ նախադասություններ են: Գրեթե նույն հարաբերությունն ենք տեսնում Գ. Բրուսյանի նշված աշխատության մեջ. 100 նախադասությունից բարդ են 68-ը: Վիճակագրական այս տվյալները, իհարկե, քիչ բան են ասում նախադասությունների ներքին կառուցվածքի ու նրանց շարահյուսական յուրահատկությունների մասին (դա առանձին քննության նյութ է), բայց և այնպես ընդհանուր պատկերացում են տալիս մեզ գիտական ոճի շարահյուսական առանձնահատկությունների մասին:

Գիտական ոճի շարահյուսական իրողությունների մասին խոսելիս չի կարելի անտեսել լեզվական մի կարևոր երևույթ՝ ներդրյալ արտահայտությունների առատ գործածությունը գիտական շարադրանքներում: Դա, անշուշտ, բխում է գիտական ոճի բնույթից: Քանի որ ներդրյալ արտահայտությունները պարունակում են զանազան դիտողություններ, ճշգրտումներ, կոնկրետացումներ, լրացուցիչ բացատրություններ հիմնական նախադասության կամ նրա որևէ անդամի համար և իմաստային առումով նախադասության մեջ ունեն հավելյալ լրացումների արժեք, ուստի գիտական խոսքում հարակից միավորների այդ գործածությունը ոչ միայն կարևոր, այլև անհրաժեշտ է: Տարբեր գիտաճյուղերի լեզվական քննությունը ցույց է տալիս, որ ներդրյալ արտահայտությունների (բառերի, բառակապակցությունների, նախադասությունների) գործածությունը չի սահմանափակվում միայն այս կամ այն գիտաճյուղի առանձնահատ-

<sup>20</sup> Տե՛ս «Язык и стиль научной литературы», էջ 31:

կություններով, այլ վերաբերում է ընդհանրապես գիտական շարադրանքի լեզվին: Բերենք մի քանի օրինակ. «Այդ նշանակում է, որ թվային առանցքի յուրաքանչյուր կետ պատկերում է որևէ մեծ թիվ (ռացիոնալ կամ իռացիոնալ) ..., ... այդ դեպքում նրանց միջև ընկած հատվածի միջնակետը (այն անվանենք C կետ) կունենա  $a+b/2$ - կոորդինատը...»:

«Ընդհանրապես բոլոր այն հատվածների ծայրերը, որոնք դուրս են գալիս հաշվանքի սկզբից և անհամաչափելի են մասշտաբի միավորի հետ (սրանց երկարություններն արտահայտվում են իռացիոնալ թվերով), կհամընկնեն ոչ ռացիոնալ կետերի հետ»: «Որպես ֆունկցիայի գրաֆիկ սովորաբար ծառայում է մի որևէ կոր (մասնավոր դեպքում մաս ուղիղ) գիծ»:

Բերված օրինակները ցույց են տալիս, որ գիտական ոճի ձևավորման մեջ լեզվական միջոցներն ունեն որոշակի յուրահատկություններ, որոնք իրենց հերթին բնութագրում են լեզվի գործառական այս տարբերակը: Մակայն չպետք է կարծել, թե գիտական ոճի լեզվական հատկանիշներն սպառվում են նշվածներով:

Լեզվական միջոցների լեզվաբանական հանգամանալից քննությունը կարող է հայտնաբերել նորանոր հատկանիշներ:

Գիտական ոճը, որպես գործառական տարբերակ, ձևավորվելով լեզվի ընդհանուր միջոցներով, իր հերթին ազդում է գրական լեզվի վրա, նպաստում նրա զարգացմանը:

**А. А. МАРУТЯН - Научный стиль и его языковые свойства.**- Одной из основных разновидностей литературного языка является научный стиль, изучение которого представляет большой интерес для лингвистики, поскольку он раскрывает закономерности функционирования языка в сфере науки.

Стилистическая дифференциация определяется рядом экстралингвистических факторов: функцией, ситуацией, целью и сферой общения.

Каждый функциональный стиль имеет ведущий экстралингвистический признак, который дает представление о функциональной природе языка в этой области. Для научного изложения такими признаками являются логичность и эксплицитность.

В статье сделана попытка охарактеризовать научный стиль и выявить основные языковые черты научного изложения.

В стилистической литературе не существует единого мнения в понимании научного стиля вообще. Некоторые исследователи выделяют в научном стиле ряд подстилей, а другие принимают единый, монолитный научный стиль.

Бесспорно, что каждая отрасль науки имеет свои признаки, однако, характеризуя научный стиль как таковой, следует исходить не из особенностей отдельных отраслей науки, а из общих признаков, предельно являемых к научному стилю вообще.